Սիպիլ

Կապույտ աղջիկը

Նոր ելած էր սուգեն, կապույյտ կը հանգեր.
Գլլուխն ուներ ծավի բեհեզ մը սիրուն,
Որուն վետ-վետ ծալքերուն նուրբ ծրփանքներ
Կ՝ոլորվեին շուրջն իր ոսկի մազերուն:

Միշտ լուսեղեն ծիծաղ մ՚ուներ իր բերան,
Հընչուն, անուշ, երգի մը պես սիրարծարծ,
Եվ խրոռվիչ նայվածքին մեջ անոր լայն
Ծավն իրեն գույն, երկինքն իր շողն էր դրրած:

Սիրած չէր դեռ, ո՛հ, զայն կ՚ըսեր իր ճակատ.
Շրքնաղ երազ մ՚էր լոկ իր կյանքն ըսպիտակ,
Անուրջ մ՝անծիր, ուր կույս հոգին խանդակաթ
Կը ծածաներ ջերմ իղձերու բոցին տակ:

Բընության մեջ ծովն էր իր տենչն առանձին.
Ծաղիկներուն, դաշտին համար սեր չուներ.
Ամեն առտու կարմիր արևն այգածին՝
Իր մակույկով ծովուն մեջ զայն կ՚ողջյուներ:

Չէինք գիտեր, պըշրա՞նք էր թե պարզ ճաշակ
Այդ մակույկն ալ կահված գույնով միշտ ծովուն,
«Կապույտ աղջիկ» կ՚անվանեինք կամ «խաժակ»,

Երբ կը նավիր փոթորկին դեմ և հովուն:

Ձեր որսար ան, և ոչ ալ գիրք կը կարդար,
Անհունին մեջ մրխրրճելով իր հոգին՝

Կ՚ուզեր բաժանել շողերուն հետ անդադար
Գաղտնիքները, զոր կուտա ծովն երկինքին:

Հովին, վիհին, ալիքներուն բարեկամ,
Հորձանքներեն, ամպեն, շանթեն չուներ վախ,
Այդ անկայուն տարրերուն մեջ շատ անգամ
Կրոված, հաղթած էր ամպրոպին ալեբախ:

Բայց գիշեր մը մոտեցավ կուր մը փութով
Սուր ճեղքերով ծալ-ծալ ծրփանքն ընդարձակ.
Իր առջևեն տեսիլքի պես հոգեթով
Լույս ճակատ մը անցավ գեղով համրձակ:

Լուսնին տարտամ նրշույլներուն ներքև ձյոուն,
Սև ու ծավի աչքեր զիրար հասկցան,
Եվ սյուգն աշխույժ անոնց շունչին մեղմ հրծծյունն
Արձագանդեց սիրո բառով մ՚աղվաձայն:

Խոժոռեցավ իսկույն ծովուն ջինջ երես,
Մ՚ելավ, մարեց լույսեր, կայծ ու բոց,
Լեռներու պես վեր բարձրացան փրրփրադեզ
Կոհակներու անսանձ ամպերն հողմակոծ:

Ա՛լ հորիզոն չրկար, քառս մ՚էր եթեր՝
Ճիվաղներու հանդես մը սև ու մրռայլ,
Երկինք անդուլ սուր փայլայներ կը նետեր,
Շանթ կը տեղար հրնոցներեն իր շրռայլ:

Նախանձոտ ծովն հանկարծ թոթվեց իր ուսեր,
Բացավ թևերն, առավ հեշտագին,
Անոր կյանքին հետ հրապույրներն ալ ու սեր
Չուզեց թողուլ կիրքերու մեծ վրտանգին:

1890